02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

44 (1443) • 22 նոյեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Արման Սարգսյանը ներկայացրեց ներքին անվտանգության վարչության նորանշանակ պետին

Նոյեմբերի 20-ին ոստիկանության պետի պաշտոնակատար Արման Սարգսյանը ոստիկանության ղեկավար կազմին եւ ներքին անվտանգության վարչության անձնակազմին ներկայացրեց ստորաբաժանման նորանշանակ պետ, ոստիկանության գնդապետ Արա Մկրտչյանին:

Ոստիկանության գնդապետ Արա Մկրտչյանը երկար տարիներ ոստիկանության ու քննչական ծառայությունում զբաղեցրել է տարբեր պաշտոններ:

Ոստիկանության պետի պաշտոնակատար Արման Սարգսյանը կարեւորեց ոստիկանության ներքին անվտանգության վարչության դերն ու նշանակությունը ոստիկանության համակարգում՝ նշելով, որ իրավապահ կառույցի ներքին անվտանգությունն ապահովող այս ստորաբաժանման գերխնդիրը ոստիկանությունն արատավոր երեւույթներից զերծ պահելն ու յուրաքանչյուր խախտմանը համարժեք գնահատական տալն է: Արման Սարգսյանն այդ ուղղությամբ տվեց կոնկրետ ցուցումներ ու հանձնարարականներ:

Արա Մկրտչյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար եւ հավաստիացրեց, որ ոստիկանության ներքին անվտանգության վարչության առաջ դրված խնդիրները կիրականացվեն ամենայն պատասխանատվությամբ:

Հանդիպմանը քննարկվեցին նաեւ ոստիկանության ներքին անվտանգության վարչության գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

Գողություն օդանավակայանում

Նոյեմբերի 15-ին ՌԴ քաղաքացին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնում հաղորդում էր տվել, որ Մոսկվա-Երեւան չվերթով ժամանել է «Զվարթնոց» օդանավակայան, ստացել ուղեբեռը եւ ժամանման սրահից դուրս գալիս նկատել է, որ ուղեբեռից գողացել են ոսկյա զարդերը՝ պատճառելով մոտ 1 միլիոն 900 հազար դրամի վնաս:

Բաժնի քրեական հետախույզները, օդանավակայանի ավիացիոն անվտանգության աշխատակիցների հետ համատեղ, բերման են ենթարկել օդանավակայանի երեք աշխատակցի, որոնցից մեկը՝ Այնթապ գյուղի, երկուսը Երեւանի բնակիչներ են:

Գողոնը հայտնաբերվել եւ առգրավվել է:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Կանխվեց տերմինալի գողությունը

Նոյեմբերի լույս 18-ի գիշերը ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի եւ Քանաքեռ-Զեյթունի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները կանխել են Դրոյի փողոցում տեղադրված «Թել Սելլ» վճարային տերմինալի գողության դեպք: Քրեական հետախույզները տեղեկություններ էին ստացել, որ երկու երիտասարդ պատրաստվում են վճարային տերմինալը գողանալ: Նրանք տերմինալը տեղահան էին արել ու փորձել հափշտակել, սակայն ոստիկանները բռնել էին հենց դեպքի վայրում:

Երիտասարդները բերման ենթարկվեցին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին: Անձնական խուզարկությամբ նրանցից մեկի մոտ հայտնաբերվեց թմրամիջոցի հետքերով կաթուցիչ, մյուսի մոտ՝ ծալովի դանակ:

Կատարվում է քննություն:

Հափշտակվել է 515 միլիոն դրամ

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում ստացված տեղեկությունների հիման վրա նախապատրաստված նյութերով բացահայտվել է հանցագործության դեպք:

Ոստիկանների օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ ԱՄԷ մի քաղաքացի գյուղատնտեսության ոլորտում ներդրումներ կատարելու եւ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով 2016 թվականին Հայաստանում հիմնադրել է մի ՍՊ ընկերություն: Նա տնօրեն է նշանակել իր ծանոթ, հայաստանաբնակ մի անձի եւ ընկերության գործունեության հողատարածքներ ձեռք բերելու եւ մշակելու նպատակով կատարել շուրջ 7 միլիոն դոլարի ներդրում: Մինչդեռ ՍՊ ընկերության տնօրենը նշված գործարքների շրջանակում, ի թիվս այլ չարաշահումների, հափշտակություն կատարելու դիտավորությամբ, կեղծ հաշվապահական փաստաթղթեր պատրաստելու եւ օգտագործելու եղանակով ընկերության դրամարկղից դրամական միջոցների մաս-մաս ելքագրումներ կատարելով, յուրացման եղանակով հափշտակել է իրեն վստահված առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր շուրջ 515 միլիոն դրամ:

Պարզվել է, որ ՍՊ ընկերության տնօրենի կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարներով գնվել է բազմաթիվ անշարժ գույք, որի ապօրինի օտարումը կանխվել է:

Հարուցվել է քրեական գործ:

Բացահայտվել է կոռուպցիոն դեպք

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով բացահայտվել է հերթական կոռուպցիոն հանցագործությունը:

Փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ 2017-2019 թթ. «Սյունիք» ջրօգտագործողների ընկերության տնօրինությունը, օգտվելով ջրային կոմիտեի իրավասու պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայության նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունք դրսեւորելու եւ պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում ստեղծված հնարավորություններից, մատակարարված ջրի ծավալները խորանարդ մետրով գրանցելու փոխարեն գրանցել են հեկտարներով: Դրանով բաժանորդներին փաստացի զրկելով մատակարարված ոռոգելի ջրի ծավալները վերահսկելու հնարավորությունից՝ ջրամատակարարման ընթացքում առաջացած 60 տոկոս կազմող ջրի իրական կորուստների ծավալներից 30 տոկոսի չափով թաքցված կորուստները՝ մոտ 58 միլիոն 365 հազար դրամի չափով, հավելագրել են ջրօգտագործողների ջրտուրքի ծավալների հաշվին եւ այդ տվյալները հետագայում ներառելով էլեկտրոնային մատյաններում՝ բաժանորդներից հավաքագրել են հավելյալ 45 միլիոն 217 հազար դրամ: Իսկ պետության կողմից սուբսիդավորման կարգով ստացել են 68 միլիոն 975 հազար դրամ:

էջ 2

Ավազակային հարձակումներ

Ավազակային հարձակումը սեփականության դեմ ուղղված ծանր հանցագործություն է: Առավել հաճախ թիրախ են դառնում բանկեր, վարկային կազմակերպություններ, խանութներ եւ դեղատներ: Ինչո՞ւ դեղատներ: Ո՛չ այն պատճառով, որ դեղատների դրամարկղերում շատ փող է լինում, պարզապես դրանք հանցագործի համար հարմար թիրախ են: Դեղատներն աշխատում են 24 ժամ, իսկ գիշերվա ժամերին ներսում սովորաբար լինում է միայն վաճառողը:

Հանցավոր հակում ունեցողներն էլ են այդպես մտածում ու գիշերը գնում դեղատուն՝ ավազակային հարձակման: Այդպես էր եղել, օրինակ, հոկտեմբերի 27-ի կեսգիշերին: Ազատության պողոտայի դեղատներից մեկն էր մտել մի տղամարդ, աշխատակցուհուն դանակով սպառնացել ու հափշտակել էր դրամարկղի գումարը: Դեղատան տեսախցիկը ֆիքսել էր կատարվածը:

էջ 6

Թմրանյութ իրացնելու կասկածանքով

Իրացման դեպքում հանցամիտը թունավորում է շրջապատողներին, դառնում չարիք հասարակության համար:

էջ 2

Դժվար ճակատագրեր

Մնողների դասերը, խրատները, պատժատեսակները աղջկա վրա հակառակ ազդեցությունն էին թողնում:

էջ 3

Լռությունը խախտելը

Հաճախ ենք ցնցվում գիշերային հրավառությունից, ռեստորանային երաժշտությունից, մեքենաների ազդանշաններից:

էջ 6

Օպերատիվ

Տավուշի ոստիկանները տնկեցին 1000 ծառ

Իրավապահները անզիջում եւ խիստ պայքար են մղում ապօրինի ծառահատումների դեմ: Ոստիկանության բոլոր ստորաբաժանումներն ամեն օր իրականացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ անտառահատումների դեպքեր բացահայտելու ուղղությամբ: Այն մարզերում, որտեղ շատ են անտառածածկ հատվածներն ու ապօրինի ծառահատումների ռիսկը, իրականացվում են տարբեր այլ միջոցառումներ եւս:

Այս անգամ կներկայացնենք հանցատեսակի դեմ ոստիկանության Տավուշի մարզային վարչության ու ենթակա բաժինների աշխատանքը:

Տավուշի մարզ: Հայաստանի ամենագեղեցիկ բնությունն ունեցող մարզերից մեկը, որ զբոսաշրջիկների ու հովեկների ամենասիրելի եւ նախընտրելի վայրերից է: Այս մարզում՝ բնության գրկում ու սրտում են Հաղարծինն ու Գոշավանքը, Պարզ լիճն ու Գոշի լիճը, մեր երկրի ամենագեղեցիկ քաղաքներից՝ Դիլիջանը, Իջեւանը, Նոյեմբերյանը, Բերդը: Տեսարժան բոլոր այս վայրերին յուրօրինակ շուք են տալիս սաղարթախիտ անտառները:

Ցավոք, այս ամենի հետ մեկտեղ կան նաեւ հատված ծառերի տեսարաններ:

Կարիք չկա եւս մեկ անգամ խոսել ծառահատումների վտանգավոր հետեւանքների մասին: Մտահոգիչն այն է, որ մեր երկրում դեռ կան մարդիկ, որոնք չգիտակցելով ծանր հետեւանքները՝ շարունակում են ապօրինի հատել ծառեր: Այս դեպքում արդեն գործի են անցնում ոստիկանները:

Տեւական ժամանակ է՝ Տավուշի մարզի անտառածածկ հատվածներում տեղադրված են ոստիկանության տարբեր ծառայությունների աշխատակիցներով համալրված պահակետեր: Ամեն օր՝ 24 ժամ, ստուգվում են կասկածելի մեքենաները, հայտնաբերվում է ապօրինի հատված փայտանյութ, հարուցվում են քրեական գործեր: Տավուշի մարզում միայն այս տարվա հուլիս-նոյեմբեր ամիսներին հայտնաբերվել է 1091 խմ ապօրինի փայտանյութ, որով պետությանը պատճառվել է շուրջ 265 միլիոն դրամի վնաս: Ոստիկանության Դիլիջանի, Տավուշի, Նոյեմբերյանի եւ Իջեւանի բաժինների ծառայողները գրեթե ամեն օր բացահայտում են ապօրինի ծառահատումների դեպքեր:

Նոյեմբերի 14-ին ոստիկանության Տավուշի մարզային վարչության ու ենթակա տարածքային բոլոր բաժինների շուրջ 120 ծառայողներ Թեղուտ գյուղի հարակից տարածքում տնկեցին 1000 ծառ:

Ոստիկանության նախաձեռնությամբ ու բնապահպանության նախարարության աջակցությամբ իրականացված միջոցառման շնորհիվ «Դիլիջան ազգային պարկ»-ի այս հատվածը տարիներ անց կունենա իր երբեմնի սաղարթախիտ տեսքը:

Ապօրինի ծառահատումների դեպքեր հայտնաբերելուց զատ՝ այս քայլով ոստիկանները փորձեցին ինչ-որ չափով վերականգնել անտառին հասցված վնասը:

Տավուշի ոստիկանները շարունակելու են անզիջում պայքար մղել ապօրինի ծառահատումների դեմ: Մեզ մնում է եւս մեկ անգամ կոչ անել՝ պահպանել բնությունն ու չհատել ծառերը: Ոստիկանությունը հետեւողական է:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Բացահայտվել է կոռուպցիոն դեպք

Սկիզբը՝ էջ 1

Քննությանը հայտնի տվյալներով՝ «Սյունիք» ջրօգտագործողների ընկերության տնօրինությունը 2017-2019 թթ. ՀՀ բյուջեից սուբսիդավորված ընկերության հաշվեկշռին մուտքագրված ֆինանսական միջոցները ծեւակերպել է որպես գարնան նախապատրաստական աշխատանքների եւ հիմնական միջոցների վրա կատարվող նորոգման ծախսեր: Միաժամանակ, ծեւական պայմանագրեր են կնքվել տարբեր ֆիզիկական անձանց կողմից տարաբնույթ ծառայություններ մատուցելու վերաբերյալ, սակայն այդ ծառայությունները մատուցվել են ոչ ամբողջ ծավալներով կամ ընդհանրապես չեն մատուցվել: Իսկ այդ նպատակներով փոխանցված 57 միլիոն 537 հազար դրամը յուրացվել է:

Ըստ նախնական տվյալների՝ վերոնշյալ հանցանքները կոծկելու դրդումներով ոչնչացվել են պաշտոնական փաստաթղթեր հանդիսացող կատարողական ակտերն ու մի շարք այլ փաստաթղթեր:

Բացի այդ, «Սյունիք» ջրօգտագործողների ընկերության տնօրինությունը հաստատապես իմանալով ընկերությունում գրանցված գլխավոր հաշվապահի կողմից 2017-2019 թթ. աշխատանքի չներկայանալու եւ այլ հաստատությունում աշխատելու մասին, ընկերության գործավարի հետ կազմել են աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրեր, որոնցում կեղծ տեղեկություններ են ներառել հիշյալ անձի կողմից կանոնավոր աշխատանքի ներկայանալու վերաբերյալ, ապա կեղծ փաստաթղթերն օգտագործելու նպատակով ներկայացրել են վճարման, ինչի արդյունքում վերջինիս անվամբ ելքագրվել է 7 միլիոն 278 հազար դրամ աշխատավարձ:

Հարուցվել է քրեական գործ:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Փորձառու էր, բայց...

Վանաձորցի Արգամ Միրաքյանը հոկտեմբերի 12-ի ցերեկը սրտատրոփ սպասեց մթնելուն, որ վերջին օրերին քունն աչքից խլած խանութը մտնի: Համաքաղաքացու խանութ կալանավայրից վերադառնալուց հետո օրը ցերեկով էլ էր մտել ու աչքի տակով տնտղել տանելիքը: Անհամբեր սպասել էր հարմար գիշերվան:

Հարմարը հոկտեմբերի լույս 12-ի գիշերն էր: Փորձ ուներ. նախկին երկու դատվածությունն էլ գողության համար էր: Այնպես որ, երբ մետաղյա ծողով զինված մտավ խանութ, հստակ գիտեր անելիքը:

Մեկ միլիոն դրամ արժողությամբ ապրանքով լքեց խանութը ու զբաղվեց իրացման հարցերով:

Գողոնն իրացրեց ու աչքը տնկեց մյուս համաքաղաքացիների ունեցվածքին:

Թումանյան փողոցի մթերային խանութն ամենահարմարն էր: Հոկտեմբերի լույս 24-ի գիշերը մետաղյա ձողով տեղահան արեց խանութի պատուհանն ու հայտնվեց ներսում: Մի քանի շիշ թանկանոց կոնյակ ու օղի, քաղցրավենիք ու պահածոներ. վատ ավար չէր, ու եկամուտն էլ քիչ չեղավ՝ մոտ երկու հարյուր հազար դրամ:

Հոկտեմբերի վերջին մի գրախանութ էլ մտավ, մի ութսուն հազար դրամի գիրք գողացավ, բայց իրացնելու հարցում դժվարացավ. իր շրջապատում գրքասեր մարդ չգտավ:

Դիմաց թաղամասի մթերային խանութը, սակայն, ճակատագրական եղավ: Նոյեմբերի լույս 10-ի գիշերը հեշտությամբ հաղթահարեց մուտքը խանութ, բայց դիմացի տան աչալուրջ բնակիչները նկատեցին խանութի կիսախավարում առկայծող լույսն ու շարժվող ստվերը եւ զանգեցին տիրոջը: Նա էլ, մինչ խանութ հասնելը, ահազանգեց ոստիկանություն:

Փորձառու Արգամ Միրաքյանը բռնվեց հանցանքի վայրում՝ հանցանքի պահին:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց, որ սույն փորձառուն նոյեմբերի սկզբներին գողություն էր արել նաեւ ռուսաստանաբնակ երկու համաքաղաքացիների բնակարաններից:

Հարուցված քրեական գործով նախաքննություն է կատարվում:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Թմրանյութ իրացնելու կասկածանքով

Մի բան է, երբ մարդն ինքն է թմրամիջոց օգտագործում, այլ բան՝ երբ իրացնում է: Երկուսն էլ անընդունելի են, բայց կա մի էական տարբերություն. իրացման դեպքում հանցամիտը հանուն փողի թունավորում է շրջապատողներին, դառնում չարիք հասարակության ու պետության համար: Օրերս նման մի դեպք բացահայտեցին Մասիսի բաժնի ոստիկանները:

Հոկտեմբերի 31-ին ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր եւ Արարատի մարզային վարչությունների ծառայողների հետ համատեղ, Մասիսի քրեական հետախույզները, ապօրինի թմրամիջոց պահելու եւ իրացնելու կասկածանքով, բերման ենթարկեցին Հայանիստ գյուղի 41-ամյա մի բնակչի:

Անձնական խուզարկությամբ նրա գրպանից հայտնաբերվեց կանեփանման զանգված: Ըստ բերման ենթարկվածի՝ հայտնաբերվածը կանեփ էր, որը քաղել էր Խաչփառ գյուղի դաշտերից:

Նույն օրը կասկածվողի տանը եւ կից օժանդակ շինություններում կատարված խուզարկությամբ հայտնաբերվեցին կանեփանման զանգված, կանեփի սերմեր եւ մեթադոնի հինգ դեղահաբ:

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում տեղեկություններ էին ստացվել, որ Երեւանի 44-ամյա մի բնակիչ ապօրինի թմրամիջոցներ է ձեռք բերում եւ զբաղվում դրանց իրացմամբ:

Նոյեմբերի 8-ին վարչության քրեական հետախույզները, ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողների հետ, Բաղրամյան պողոտայի եւ Պռոշյան փողոցի խաչմերուկից, ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու կասկածանքով, հիշյալ անձին բերման ենթարկեցին ոստիկանության Արաբկիրի բաժին:

Անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին չորս փաթեթ մարիխուանայի նմանվող զանգված եւ յուրիատուկ հոտով, մոխրացած հետքերով կաթուցիչ:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության եւ օգտագործման դեպքերի բացահայտումը, հետախուզական միջոցառումների հստակ ծրագրից զատ, հաճախ իրավապահ տարբեր կառույցների համագործակցություն է պահանջում: Հենց այդպիսի փոխգործակցության շնորհիվ օրերս բացահայտվեց հերթական դեպքը:

Ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները Հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործի շրջանակներում խուզարկություն կատարեցին Վանաձոր քաղաքի 37-ամյա մի բնակչի տանը: Հայտնաբերվեցին մոտ չորս կգ մարիխուանա եւ կանեփի տասը բույս:

Հարուցված քրեական գործերի նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Պետական-հասարակական ունեցվածքի գողություն

Ոստիկանության Ապարանի բաժնի ծառայողները գիշերային ուժեղացված ծառայության ընթացքում Քուչակից Ծաղկաշեն գյուղ տանող ճանապարհին նկատել են, որ տրակտորով համայնքային սեփականություն հանդիսացող դաշտից հող են բեռնում խոշոր բեռնատարի թափք:

Ոստիկանները նրանց գործողությունները դադարեցրին, եւ սկսվեց նյութերի նախապատրաստման գործընթաց: Շուտով հայտնի դարձավ, որ բեռնատարի վարորդը ուրիշի դաշտից պարբերաբար հող է տեղափոխել իր տնամերձ հողատարածք, նույնիսկ փորձել է հողի մի մասը տեղափոխել Երեւան:

Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ տեղափոխել է 250-300 խորանարդ մետր հող, որի արժեքը գերազանցում է 2 միլիոն դրամը:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ

Եթե որոշ հանցատեսակներ, ասենք, սպանությունը, ավազակային հարձակումը, գողությունը կամ կողոպուտը դարերի վաղեմություն ունեն եւ հին են նույնքան, որքան մարդկությունը, ապա տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները համեմատաբար նոր հանցատեսակների թվին են պատկանում: Եվ, որքան էլ ցավալի է, քաղաքակրթության, տնտեսական հարաբերությունների զարգացման հետ մեկտեղ կատարելագործվում են նաեւ այս հանցատեսակում թրծվածների մեթոդները: Նման դեպքերում ոստիկանությունը պայքարում է արդեն ոչ թե մարտնչող տգիտության, այլ կրթված անօրենների դեմ, ովքեր հանցավոր ծրագրեր կազմելու հարցում ասես անսպառ երեւակայություն ունեն, ուսումնասիրում են թիրախը, հաշվարկում ամեն մանրուք, գիտեն օրենքի տառը եւ այն շրջանցելու համար հստակ պատկերացնում են, թե որ փաստաթուղթն ինչու եւ ինչպես է պետք կեղծել:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները ուղղված են այն հասարակական հարաբերությունների դեմ, որոնք ծագում են նյութական արժեքների արտադրության, սպառման, բաշխման, մատակարարման բնագավառում, ծառայությունների մատուցման ոլորտում: Այդ հանցագործություններից են օրինական ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը, ապօրինի ձեռնարկատիրությունը, կեղծ ձեռնարկատիրությունը, կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, փողերի լվացումը, մաքսանենգությունը:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած փոփոխությունները, հատկապես՝ տնտեսական ոլորտում, նոր հասարակական հարաբերությունները կարգավորելու եւ պաշտպանելու համար օրենքներ ընդունելու անհրաժեշտություն առաջացրին: Լուրջ փոփոխությունների ենթարկվեց տնտեսական հարաբերությունների օրենսդրական դաշտը. ընդունվեցին նոր օրենքներ, գործողներից մի քանիսը բարեփոխվեցին, վերակազմավորվեց ոստիկանական այն կառույցը, որը կոչված էր պայքարելու կոռուպցիայի եւ տնտեսական գործունեությանն ուղղված հանցագործությունների դեմ:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություն է ապօրինի ձեռնարկատիրությունը: Սակայն դեպքը, որ ոստիկանության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության աշխատակիցներն արձանագրեցին, փաստում էր ոչ միայն ապօրինի ձեռնարկատիրության գոյության, այլեւ արտասահմանյան կեղծված ապրանքային նշանով կաշվե իրեր արտադրելու մասին:

Երեւանի առեւտրի կենտրոններից մեկում գործող «Կառլո Կոմբերցի» ընկերությանը պատկանող տաղավարում, ինչպես եւ նույն ընկերության տնօրենի առանձնատան առաջին հարկում ապօրինի գործող կոշիկի եւ կաշվե իրերի արտադրամասում ոստիկաններն արձանագրեցին արտասահմանյան ապրանքանիշերով թանկարժեք կոշիկներ, պայուսակներ, գոտիներ, դրամապանակներ, կեղծված այլ պարագաներ:

Իրականացված միջոցառումներով պարզվեց, որ ընկերության տնօրենն արտադրությունը կազմակերպել է 2013 թվականի օգոստոսին եւ 12 միլիոն 360 հազար դրամի չափով թաքցրել իրացման իրական ծավալները, այդպիսով չարամտորեն խուսափել է հարկային պարտավորությունները կատարելուց:

Կատարվածն, ինչ խոսք, դատապարտելի է, սակայն մի բան է, երբ մշակվում եւ կեղծվում է կաշին, այլ բան՝ սննդամթերքը, մանավանդ, երբ սպառողները երեխաներ են:

Օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ մի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիր-տնօրեն մայրաքաղաքում կազմակերպել է հավի մսի մշակման եւ փաթեթավորման գործունեություն, որտեղ քացախի, կալիումի պերմանգանատի եւ այլ քիմիական նյութերի միջոցով մշակվում է անհայտ ծագում ունեցող, փչացած, օգտագործման համար ոչ պիտանի հավի միս:

Ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության եւ Նոր Նորքի բաժնի աշխատակիցների օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ընկերության արտադրամասերում հայտնաբերեցին եւ առգրավեցին կեղծ ապրանքանիշով եւ արտադրության ամսաթվերի վերաբերյալ կեղծ տվյալներով հավի մսի խմբաքանակ:

Արտադրամասի զննությամբ հայտնաբերվեց փչացած հավի միս, վերամշակման համար նախատեսված քիմիական տարբեր նյութեր ու դատարկ տարաներ, որոնք վերցվեցին հետազոտությունների համար:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնում եւ ոստիկանության Կապանի բաժնում օպերատիվ տեղեկություններ ստացվեցին, որ մի քաղաքացի ունի ՀՀ կեղծ թղթադրամներ ու մետաղադրամներ եւ դրանք իրացնում է Հայաստանի տարբեր քաղաքներում:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվեց այդ անձի ինքնությունը: Պարզվեց, որ վարձակալական հիմունքներով բնակվում է Երեւան քաղաքի տարբեր հասցեներում: Որոնողական աշխատանքներից հետո նա հայտնաբերվեց: Անձնական խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվեցին տասնյակ կեղծ թղթադրամներ:

Պարզվեց՝ համակարգչով եւ տպագրական սարքերով աշխատելու հմտություն ուներ Երեւանի բնակիչ նրա ընկերը, որը նույնպես բերման ենթարկվեց:

Կարելի է ասել՝ կիսել էին աշխատանքը. մեկը հմտացել էր թղթադրամներ տպագրելու, մյուսը՝ մետաղադրամ հատելու գործում:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններից է ապօրինի ծառահատումը:

Ծանր տարիներին էներգետիկ ճգնաժամի ու շրջափակման պատճառով անտառային տարածքները լուրջ վնաս կրեցին: Անխնա հատվեցին անտառները: Հիմա անտառներն իրենց «իմունիտետի» շնորհիվ փոքրիշատե ինքնավերականգնված են: Բայց ապօրինի ծառահատումների խնդիրը մնում է արդիական:

Ապօրինի ծառահատումների դեմ ոստիկանության պայքարը կրում է շարունակական բնույթ: Հարկ է, որ բոլորը գիտակցեն հարցի կարեւորությունը, ուստի ոստիկանությունն ակնկալում է նաեւ անտառամերձ տարածքների բնակիչների ակտիվ ներգրավում այդ պայքարին:

Վերջում հավելենք՝ ինքներս պետք է հարգենք եւ պահպանենք օրենքները այն պարզ գիտակցումով, որ կոռուպցիան եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններն առաջինն են քայքայում երկրի տնտեսությունը, իսկ հզոր հայրենիք ունենալու նախապայմանը ոչ միայն բարեփոխված իրավական համակարգն է, այլեւ օրինապահ քաղաքացին:

Դժվար ճակատագրեր

Ծնողները դստեր՝ տասնհինգամյա Նարինեի հետ լեզու չգտան: Աղջկա հախուռն բնավորությունը, տարիքին անհարիր վարքագիծը սրերով ընդունեցին, իսկ դաստիարակչական միակ մեթոդը ծեծն էր, տնից դուրս չթողնելը...

Նարինեն, սակայն, չէր ուղղվում. ծնողների «դասերը», «խրատները», պատժատեսակները նրա վրա հակառակ ազդեցությունն էին թողնում: Երբեմն փախչում էր տնից, տրվում «մեծական» ցանկություններին, թափառում փողոցներում...

Աղջկան փողոցից կտրեց ու տիրություն արեց ոստիկանությունը՝ ի դեմս անչափահասների գործերով ծառայության աշխատակիցների:

Նարինեին հանդիպեցինք հատուկ կրթահամալիրում:

«Ոստիկաններն ինձ շատ օգնեցին, շատ բան սովորեցրին, մենակ նրանք ինձ ճիշտ հասկացան, ու ճիշտ բաներ խոսեցին ինձ հետ»,- անկեղծանում է Նարինեն:

Այդպիսին է նա՝ անկեղծ ու անբռնազբոս, մեղմ ու նաեւ՝ անկառավարելի, լսող ու չենթարկվող: Կրթահամալիրի հոգեբանն ասում է, որ բարդ խառնվածքով պայմանավորված՝ շեղումներ ունի, պետք է հետը լուրջ աշխատանք տարվի: Իսկ ոստիկանության անչափահասների գործերով ծառայության աշխատակիցներն ասում են՝ դժվար, բայց ընդունակ երեխա է, պետք է նրբանկատ ու զգույշ լինել, որ տարիքային խառնաշփոթից դուրս գա: Նրանք, ի տարբերություն ծնողների, Նարինեին ուշադրության կենտրոնում են պահում, գիտեն հետը ճիշտ վարվելու ձեւերը, փորձում են ճիշտ ուղու վրա դնել նրան: Դժվար, չափազանց դժվար մարդ է գյումրեցի այս տասնհինգ տարեկան աղջիկը: Ցանկություն, սրտացավություն, հետեւողականություն, բարություն՝ ահա դեղատոմսը, ինչով հնարավոր կլինի բուժել նրա խառնաշփոթ հոգին:

«Դժվար» երեխաներ են նաեւ գյումրեցի քույրիկները՝ տասնչորսամյա Լիդան ու տասներեքամյա Ռիտան: Նրանց ոստիկանությունում հանդիպեցինք. այստեղ էին, որովհետեւ վաղուց արդեն խախտել էին արգելվածի սահմանը...

Աղջիկների հայրը վաղուց է հեռացել ու նրանց մասին լսել անգամ չի ուզում: Մայրը, որ գիշերային հերթափոխով է աշխատում, իր անձնական հարցերով ավելի է զբաղված, քան դեռահաս աղջիկներով:

Զլացել են նաեւ ուսուցիչները՝ իրենց անտարբերությամբ աչք փակելով նրանց բացակայությունների վրա: Եվ խաղալու, գիրք կարդալու, դաս սովորելու փոխարեն քույրերը ամեն օր խրվել են կեղտի մեջ...

Աղջիկների վարքային շեղումների մասին օպերատիվ տվյալներ ստանալուց հետո ոստիկանություն հրավիրվեց նրանց մայրը:

Եկավ, գանգատվեց դուստրերից, ասաց, որ «կապը կտրածներ են», իսկ ինքն աշխատում է, նրանցով զբաղվելու ժամանակ չունի: Իհարկե, չասաց, որ ազատ ժամանակն էլ սիրեկանների հետ է անցկացնում:

Ինչեւէ: Անչափահաս աղջիկները ոստիկանության միջնորդությամբ տեղավորվեցին հատուկ կրթահամալիրում:

Երեք դժվար ճակատագրեր, որ հանդիպեցինք Գյումրիում: Հանրապետության այլ քաղաքներում էլ կան նման ճակատագրերով դեռահասներ: Խնդի՞ր կա, լուրջ խնդիր, որ ավելի շատ ընտանիքներից է գալիս: Ուրեմն, սիրելով մեր զավակներին՝ պետք է ուշադիր լինենք նրանց հետաքրքրությունների, առօրյայի, ներաշխարհում կատարվող խմորումների նկատմամբ, եւ միշտ ժամանակ գտնենք նրանց համար...

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Բացահայտում է ոստիկանությունը

Նոյեմբերի 8-ին ոստիկանության Կոտայքի բաժնի քրեական հետախույզները Գառնիի բաժանմունքի ծառայողների հետ համատեղ, գողություն կատարելու կասկածանքով, Երեւանի Սիլիկյան փողոցից ոստիկանության Կոտայքի բաժին բերման ենթարկեցին 34-ամյա մի տղամարդու:

Կասկածվողը խոստովանական բացատրություն տվեց, որ նույն օրը փորձել է գողանալ Աբովյանի Երիտասարդական փողոցում կայանված «ՎԱԶ-2106» մակնիշի մեքենայի գազի բալոնը, բայց գործն ավարտին հասցնել չի կարողացել:

Պարզվել է նաեւ, որ նա հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Կոտայքի մարզում եւ մայրաքաղաքի տարբեր վարչական տարածքներում կատարել է տասնյակ նմանատիպ գողություն եւ գողության փորձեր՝ փողոցներում, բակերում կայանված մեքենաներից հափշտակելով ձայնարկիչներ, գազի բալոններ ու մարտկոցներ:

Նոյեմբերի 4-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում տեղեկություններ ստացվեցին, որ Դավիթաշեն թաղամասի 33-ամյա մի բնակիչ Փափազյան փողոցի առեւտրի կենտրոնից գողություն է արել: Նույն օրը քրեական հետախույզները կասկածվողին բերման ենթարկեցին:

Դեպքերի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Չատացված հարեւանություն

Արագածոտնի մարզի Աղձք գյուղի բնակիչ Արտավազդ Գրիգորյանը Վանաձորում բնակարան ուներ, ուր տարվա ընթացքում մի քանի անգամ լինում էր:

Սեպտեմբերի 6-ին հերթական անգամ կնոջ ու որդու հետ ուղեւորվեց Վանաձոր: Բնակարանի դուռը բացելուն պես նկատեց, որ վերեւի հարեւանի տնից ջուր է հոսել միջանցք՝ վնասելով առաստաղն ու պատերը: Այդ մասին տեղեկացրեց հարեւանին՝ Վարդանին: Նա էլ կատարվածը պարզաբանելու համար Արտավազդին հանդիպեց բակում: Նրանց խաղաղ զրույցը հենց սկզբից չստացվեց, քանզի Վարդանը մարտական էր տրամադրված: Փոխանակ ներողություն խնդրեր եւ թերությունը շտկելու պատրաստակամություն հայտներ, սկսեց վիճել Արտավազդի հետ: Նա էլ քաշեց Վարդանի ձեռքից, որի ընթացքում Վարդանի բջջային հեռախոսն ընկավ ու վնասվեց: Այսքանով նրանց վեճն ավարտվեց: Սակայն Վարդանը վնասված հեռախոսի պատասխանը տվեց՝ քարով կոտրելով բակում կայանված Արտավազդի «ՎԱԶ-2106»-ի ապակիները:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Բազումի բաժնի աշխատակիցները: Արտավազդը կատարել էր արարք՝ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Վարդանի արարքում առկա էր զանցանք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով:

Քրեական գործի հարուցումը, սակայն, մերժվել է դիմողի բողոքի բացակայությամբ:

Անհաջող փորձ

Սեպտեմբերի 23-ին, գողություն կատարելու կասկածանքով, ոստիկանության Բազումի բաժին բերման ենթարկվեց վանաձորաբնակ Բաբկեն Խաչատրյանը, որը կատարածի մասին խոստովանական բացատրություն տվեց:

Սեպտեմբերի 20-ի երեկոյան Բաբկենը տանը հեռուստացույց էր դիտում, սակայն ուշքն ու միտքը այլ տեղ էր: Որոշել էր, որ կեսգիշերին կայանված մեքենաներից գողություն է անելու: Մի խոսքով, կեսգիշերին պտուտակահանով «զինված»՝ տնից դուրս ելավ:

Որոշ ժամանակ դեսուդեն անելով՝ մոտեցավ կայանված «ՎԱԶ-2107» մակնիշի մեքենային: Համոզվելով, որ տարածքում մարդ չկա, պտուտակահանով քանդեց մեքենայի հետեւի անվադողերից մեկը: Հաջորդ օրերին կմտածեր դրանց վաճառքի մասին, իսկ գնորդ ճարելը դժվար չէր Բաբկենի համար: Այդպես մտքերի մեջ ընկած անիվի պտուտահաներն էր քանդում, երբ հանկարծ ձայն լսեց: Պտուտակահանը դեպքի վայրում թողնելով՝ դիմեց փախուստի: Սակայն դա էլ չօգնեց:

Բաբկեն Խաչատրյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 34-177 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցարարք:

Դիմողը, սակայն, բողոքը չի պնդել, եւ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Համակարգչի օգուտն ու վնասը

Սկիզբը՝ նախորդ համարում

Երեխայի աշխատանքի գնահատումը որոշ դեպքերում արտահայտվում է համակարգչի առաջ անժամանակ նստելու թույլտվությամբ, ասենք, հանգստյան օրերին անսահմանափակ նստել համակարգչի առաջ: Իհարկե, դա բավարար չէ, որ կարճ ժամանակաընթացքում վնաս պատճառվի երեխայի առողջությանը: Բայց եթե շարունակական եւ պարբերական բնույթ կրի, ապա կբերի հիվանդության:

Սիրելի ծնողնե՛ր, զգույշ եւ զգոն եղեք, երեխան անհատականություն է, եւ ամեն հարցում պահանջվում է անհատական վերաբերմունք: Միայն դուք կարող եք ընտրել ճիշտ բառեր, վերաբերմունք ձեր երեխայի հանդեպ, ինչի արդյունքում կգաք ընդհանուր հայտարարի:

Ներկայումս շատերի աշխատանքը կապված է համակարգչի հետ: Եվ գրեթե բոլոր ընտանիքներում կնոջ կամ ամուսնու համար համակարգիչը աշխատանքային գործիք է: Երբ աշխատավայրում աշխատանքը չեն վերջացնում, բերում են տուն ու երկար նստում համակարգչի առաջ, ինչն էլ դառնում է վիճաբանության առիթ: Կասեք՝ ինչո՞ւ: Տան անդամների համար համակարգիչը դիտարկվում է որպես «խաղալիք»: Ինչ է անում փոքրիկը, որի ձեռքից խլում են խաղալիքը: Սկսվում է փնթփնթոցը, ինչը վերածվում է վիճաբանության...

Մասնագետների նշած հաջորդ վնասներից մեկն էլ այն է, որ երկար ժամանակ համակարգչի առաջ անցկացնելով՝ մարդն աստիճանաբար կտրվում է առօրեական աշխարհից, մարդկանց հետ շփումներից: Նրա համար կյանքը սկսվում եւ ավարտվում է վիրտուալ աշխարհում. այնտեղ նա կարդում է, գրում, սիրահարվում, պատերազմում, խաղում եւ վերջապես ներկայանում այնպիսին, ինչպիսին կցանկանար լինել: Ու գալիս է պահը, երբ նրա համար այդ աշխարհից դուրս այլեւս աշխարհ չկա: Եթե փորձենք նրան կտրել այդ աշխարհից, անցանկալի հետեւանքների ականատեսը կլինենք:

Ասվածի ապացույցը վերջերս Սանկտ Պետերբուրգում կատարված դեպքն է, երբ ծնողները չէին կարողացել իրենց անչափահաս երեխային կտրել համակարգչից. հայրը դանակով կտրել էր համակարգչի լարը, որդին էլ նույն դանակով դանակահարել էր հորը:

Խոսել համակարգչի, համացանցի մասին եւ չանդրադառնալ սոցիալական ցանցերին՝ չի կարելի:

Ի՞նչ վնաս կարող է հասցնել սոցցանցն ընտանեկան անդորրին: Ոմանք գուցե կասեն՝ ոչ մի, ոմանք ուսերը թափ կտան, բայց հասարակության մի ստվար հատված կհաստատի, որ, այնուամենայնիվ, սոցցանցը վտանգ ներկայացնում է:

Ընդհանրապես, համացանցում մարդն ազատ է եւ ազատություն է տալիս իր մտքերին, գործողություններին:

Պատահել են դեպքեր, երբ ամուսնացած կինը սոցցանցով ծանոթացել է ինչ-որ մեկի հետ: Որոշ ժամանակ շփվել են, հետո, երբ ցանկացել է վերջակետ դնել հարաբերություններին, չի ստացվել. կամ երիտասարդն իսկապես սիրահարվել է, կամ էլ փորձել է շանտաժի ենթարկել: Վերջերս տեղի ունեցածը վերը ասվածի ապացույցն է, երբ սոցցանցով շփվելուց հետո հանդիպել էին, եւ սիրահարված երիտասարդը առեւանգել էր երկու երեխաների մորը...

Կամ՝ որքա՞ն երիտասարդ աղջիկներ խարդախների զոհն են դառնում սոցցանցերում:

Ծարքը կարելի է երկար թվարկել: Պարզապես բոլոր դեպքերում եւ բոլոր իրավիճակներում զգույշ եղեք, սթափ մտածեք, ինչպես ժողովրդական առածն է ասում՝ «Յոթ չափեք, մեկ կտրեք»:

Մեր կյանքն առանց համակարգչի, առանց համացանցի հնարավոր չէ պատկերացնել, եւ որպեսզի այդ օգտակար աշխատանքային գործիքը չդառնա վիճաբանությունների, ընտանիքների, ճակատագրերի կործանման պատճառ՝ հարկավոր է նրանից միայն լավը վերցնել, այն ծառայեցնել նախանշված նպատակին:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Ավարտալի ամփոփագիր

Հոգեբանի կարիք ունեցող հոգեբույժը

Ոստիկանություն է զանգել 73-ամյա մի կին եւ հայտնել, թե դստեր նախկին ամուսինը անհանգստացնում է իրենց:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ բնակարանում ծագած վիճաբանության ժամանակ հոգեբույժ փեսան խփել է դասախոս նախկին կնոջը եւ ոլորել նախկին դասախոս զոքանչի ձեռքը՝ վնասելով մատը:

Հայրական քարկոծում

Ոստիկանություն զանգած 36-ամյա կինը հայտնել էր, որ հայրը անհանգստացնում է իրեն:

Մեկնած ոստիկաններին նա հաղորդում է տվել, որ իրենց այգում, վիճաբանության ժամանակ, 65-ամյա հայրը երկու անգամ քար է նետել իր ուղղությամբ:

Հայրը երեւի Ավետարան չի կարդացել:

Անհամ կատակ

Ոստիկանություն է զանգել 22-ամյա մի երիտասարդ եւ հայտնել, թե իրեն տարել են նախկին մսի կոմբինատի մոտ եւ պահանջել մեկուկես միլիոն դրամ:

Քիչ անց նա եկել է ոստիկանություն եւ հրաժարվել հաղորդում տալուց, քանի որ իր հետ կատարվածը, պարզվում է, ընկերների կողմից կազմակերպված կատակ էր:

Հանգամանքները լրջորեն պարզվում են:

Զույգ տղա ունենալու վտանգները

Ոստիկանություն է զանգել 44-ամյա մի տղամարդ եւ հայտնել, որ մեկ ժամ առաջ հարմարեցված բանալիով մուտքի դուռը բացել ու անջատենյակի պահարանից գողացել են ոսկյա զարդերը:

Քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ բնակարանից գողություն չի եղել, այլ այն ձեւացրել են ահազանգողի 11-ամյա որդիները: Զույգ տղաները ներկայացրել են ոսկյա զարդերը:

Հայրական տան կռիվ

Ոստիկանություն զանգած 23-ամյա կինը հայտնում էր, որ ամուսնու եղբայրը ամուսնուն խաբելով՝ ստորագրել է տվել հայրական տան նվիրատվությունը մորը, հիմա էլ տանը կռիվ է:

Մեկնած ոստիկաններին նա հաղորդում է տվել, որ տան փաստաթղթավորման հարցի շուրջ զրույցի ժամանակ ամուսնու եղբոր կինը հարձակվել է իր վրա, քաշել մազերից, գցել գետնին եւ ոտքերով խփել՝ պատճառելով վնասվածքներ:

Հանգամանքները պարզվում են, թեպետ, ընդհանուր առմամբ, ամեն ինչ պարզ է:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ նոյեմբերի 14-ից 21-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 37 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր սպանության փորձի եւ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 1-ը՝ ծեծի, 1-ը՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 1-ը՝ տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերության կամ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու, 1-ը՝ անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ տարածելու եւ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու, 5-ը՝ գողության, 1-ը՝ գողության եւ համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակության, 6-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ խուլիգանության, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու կամ դրանք կատարելու սպառնալիքի համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 6 հետախուզվող:

Արձանագրվել է 113 ճանապարհատրանսպորտային պատահար. 8 մարդ զոհվել է, 153-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 37 դեպք. 3 մարդ զոհվել է, 41-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Նոյեմբերի 18-ին Երեւանի Չեխովի եւ Հ. Հովսեփյան փողոցների խաչմերուկում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 72-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 18-ին Երեւանի Կիեւյան եւ Օրբելու փողոցների խաչմերուկում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 11-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 18-ին Երեւանի Դրոյի եւ Ա. Ահարոնյան փողոցների խաչմերուկում «Հյունդայի» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 56-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 18-ին Բագրատաշենի մաքսակետում «Վոլվո» բեռնատար ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել մի կնոջ, որը տեղում մահացել է:

■

Նոյեմբերի 18-ին Երեւանի Խանջյան փողոցի թունելի սկզբնամասում «Օպել» մակնիշի ավտոմեքենան բախվել է «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի: 61-ամյա վարորդը մահացել է:

■

Նոյեմբերի 18-ին բեռնատար գնացքի մեքենավարը վրաերթի է ենթարկել Արտենի գյուղի բնակիչ, 51-ամյա մի տղամարդու: Նա տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ էլ մահացել է:

■

Նոյեմբերի 18-ին Երեւանի Արցախի պողոտայում «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել հինգ քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Նոյեմբերի 19-ին Վարդենիսի Վ. Համբարձումյան փողոցում նախ վթարի է ենթարկվել «Օպել» մակնիշի ավտոմեքենա, իսկ մոտ 60 մ հեռու, ճանապարհի երթեւեկելի հատվածում, «Միցուբիշի Մոնտերո» մակնիշի ավտոմեքենան շրջվել է. վթարի վայրից հիվանդանոց է տեղափոխվել 36-ամյա Արա Մանուկյանի դիակը:

■

Նոյեմբերի 19-ին Երեւանի Գ. Չաուշի եւ Մազմանյան փողոցների խաչմերուկում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 55-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 19-ին Երեւանի Սասնա Ծռերի փողոցում «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 64-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 19-ին Երեւանի Օհանովի փողոցում «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 68-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 19-ին Երեւանի Մառի փողոցում անհայտ ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 48-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 19-ին Երեւանի Հասրաթյան փողոցում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 24-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 20-ին Վեդի-Ոսկետափ ճանապարհի 5-րդ կմ-ին՝ Վանաշեն գյուղի հատվածում, «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ բախվել գազատար խողովակին. 43-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 20-ին Գյումրի քաղաքի Ալեք Մանուկյան եւ Գ. Նժդեհի փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Միցուբիշի» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Միցուբիշի»-ի 23-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Լեգենդներ եւ իրականություն

Ինչպես սկսվեց համագործակցությունը

1990-ական թվականների սկզբին Մոսկվայի ասորական հանցախումբը Յապոնչիկի աջակցությամբ, որի առաջին կինն ասորուհի էր, ճզմեց Ռուսաստանի մայրաքաղաքում թմրավաճառությամբ զբաղվող ադրբեջանցիներին: Ասորիները ակտիվորեն համագործակցում են ադրբեջանցիների ու վրացիների հետ, մեծ ազդեցություն ունեն բուն Վրաստանում եւ լայն կապեր՝ ռուսական հանցաշխարհի պարագլուխների հետ: Որոշ տվյալներով՝ ասորական հանցախմբերն ուղղակի կապեր ունեն Արեւելյան Եվրոպայի երկրների, Գերմանիայի, Ավստրիայի, ԱՄՆ-ի հանցավոր ընկերակցությունների հետ:

1997 թ. «Կոմերսանտ» թերթը գրում էր. «1994 թվականի հուլիսին Իվանկովի շահերը բախվեցին Սերգեյ Տիմոֆեեւի (Սիլվեստր) շահերին, որը գլխավորում էր օրեխովյան հանցախումբը եւ վերահսկում թմրամիջոցների վաճառքը Մոսկվայի մեծ մասում: Տիմոֆեեւը Իվանկովի որդուն՝ Էդիկին, մեղադրեց, որ սա չի «մուծվել» 300 հազար դոլար: Որոշ ժամանակ անց Սիլվեստրին պայթեցրին իր «Մերսեդես»-ում, Մոսկվայի կենտրոնում:

ՀԴԲ-ի հավաստմամբ՝ Տիմոֆեեւին սպանելու հրամանը տվել էր Յապոնչիկը, որպեսզի լիովին տնօրինի ռուսական մաֆիայի հանցավոր բիզնեսի վերահսկողությունը ոչ միայն ԱՄՆ-ում, այլեւ Եվրոպայում: Տիմոֆեեւի մահվանից հետո Յապոնչիկը կապվում է Սերգեյ Միխայլովի (Միխաս) եւ Վիկտոր Ավերինի (Ավերա ավագ) հետ: Յապոնչիկի հրահանգները վերաբերում էին Սիլվեստրի ժառանգությանը. Միխասն ու Ավերան պետք է վերահսկողության տակ առնեին այն բանկերը, որոնք նախկինում ենթարկվում էին նրան: Նույն այդ սոլնցեւյան հանցախմբին էր նա հանձնարարել թմրաբիզնեսի վերահսկողությունը Մոսկվայում: Մինչ այդ Յապոնչիկը թմրաշուկայից դուրս էր մղել վրացական «օրենքով գող» Չեմալ Խաչիզադեին, որն իր ձեռքում էր պահում ադրբեջանցի թմրավաճառներին ու կոկաինի առաքումը Ռուսաստանով: Սակայն 1994 թվականի վերջին թմրաշուկան հիմնականում սոլնցեւյան խմբավորման ձեռքին էր...

Յապոնչիկն ու Թոֆիկ Բակինսկին

2000 թվականի վերջին տեղեկատվություն տարածվեց, որ Մոսկվայում ձերբակալվել է մոսկովյան ադրբեջանական հանցավոր ընկերակցության պարագլուխներից մեկը՝ 49-ամյա Թոֆիկ Ահմեդովը, որը հանցաշխարհում առավել հայտնի էր որպես «օրենքով գող» Թոֆիկ Բակինսկի:

Ռուսաստանի ՆԳ նախարարության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության օպերատիվ աշխատողները նրան բռնել էին Մոսկվայի Լյուբլինյան փողոցում: Ապօրինի թմրամիջոց պահելու մեղադրանք էր ներկայացվել. խուզարկությամբ նրա մոտ 4,5 գրամ հերոին էր հայտնաբերվել...

Թոֆիկ Ահմեդովը Ռուսաստանի հնագույն քրեական հեղինակություններից է: Առաջին անգամ կողոպուտի եւ անօրինական զենք կրելու համար ազատազրկման է դատապարտվել 1967 թվականին, երբ ընդամենը 16 տարեկան էր: Ահմեդովը ազատազրկման վայրերում անցկացրել է ընդհանուր առմամբ 18 տարի: Համարվում էր Յապոնչիկի մերձավոր «զինակիցներից» մեկը: Վերահսկում էր Մոսկվայի մեծածախ շուկաներից մի քանիսը, որոնք «պահում» էին էթնիկ ադրբեջանցիները:

Յապոնչիկն ու Հիքմեթ Սաբիրաբադսկին

2006 թ. ապրիլի 7-ին Մոսկվայի Լենինգրադյան պողոտայում քրեական պարզաբանումների արդյունքում սպանվեց Մոսկվայի քրեական համայնքի առաջնորդ Հիքմեթ Մուխտարովը՝ Սաբիրաբադսկի մականունով:

Մարդասպանները կրակ էին բացել ինքնաձիգից եւ ատրճանակներից, երբ Մուխտարովը, գրասենյակից դուրս գալով, նստել էր մոտակայքում կայանված իր «Մերսեդես»-ը: Չորս օր անց Ադրբեջանի Սաբիրաբադի շրջանի Քյուրքենդ գյուղում տեղի ունեցավ քրեական «հեղինակության» թաղումը, որին մասնակցում էր Յապոնչիկը: Իշխանությունները դա թույլատրել էին, պայմանով, որ նա Ադրբեջանում կմնա 24 ժամ: Յապոնչիկը կատարեց խոստումը եւ 24 ժամը լրանալուն պես, ինչպես գրում էր «Մուսավաթ» թերթը, լքեց երկիրը:

Ադրբեջանի լրատվամիջոցների փոխանցմամբ՝ Մուխտարովի թաղմանը մասնակցել էին քրեական «հեղինակություններ»՝ Ռուսաստանից ու Շվեյցարիայից: Նրանց թվում էր նշանավոր ռուս «օրենքով գող» Իշխանը: Թաղմանը մասնակցել էր նաեւ Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Փանահ Հուսեյնը, իսկ Սաբիրաբադի շրջանում, այդ հուղարկավորության հետ կապված, մեկ շաբաթով հետաձգվել էին բոլոր հարսանիքները:

Վյաչեսլավ Իվանկովը՝ ռուսական մաֆիայի «կնքահայրը», ինչպես նրան կոչում է Հետաքննությունների դաշնային բյուրոն, միշտ էլ հետաքրքրություն է դրսեւորել Ադրբեջանի հանդեպ: Մասնավորապես, Բաքու կատարած նրա այցելության մասին Ադրբեջանի իրավապաշտպանների կենտրոնի ղեկավար Էլդար Զեյնալովն ասել է, թե ադրբեջանական «օրենքով գողերը» վաղուց փախել են երկրից ու հիմնականում տեղավորվել Ռուսաստանում, ուստի Յապոնչիկը նրանց հետ հանդիպելու խնդիր դժվար թե ունենար, առավել հավանական է, որ Ադրբեջան էր ժամանել ինչ-որ բիզնես ծրագիր իրականացնելու նպատակով:

«Միակ «օրենքով գողը»,- նշել է Էլդար Զեյնալովը,- որ ապրում է Ադրբեջանում, Լոթու Գուլին է (Գուլու Սալիֆով), այն էլ՝ բանտաճաղերից այն կողմ: Վերջին անգամ նրան դատել են ազատազրկման վայրերում ութ կնոջ բռնաբարելու համար: Սակայն Սալիֆովը հասել էր նրան, որ այդ մեղադրանքը հանվել էր: Չնայած դրան, Մոսկվայում տեղի ունեցած «օրենքով գողերի» հավաքում «պաշտոնանկ էին արել» Լոթու Գուլիին, այսինքն՝ վերցրել էին «օրենքով գողի» տիտղոսը»:

Յապոնչիկն ու Թելման Իսմայիլովը

Յապոնչիկի սպանության վարկածներից մեկը կապվում է ադրբեջանական «հետքի» հետ եւ առնչվում է Մոսկվայի Չերքիզովյան շուկայի փակմանը, որը պատկանում էր ադրբեջանական ծագումով օլիգարխ, հրեա Թելման Իսմայիլովին: Չերքիզովյան շուկայից «սնվում էին» տարբեր խավերի, այդ թվում՝ իշխանության ներկայացուցիչներ: Բացի այդ, շուկայի վրա 2 միլիարդ դոլարի մաքսանենգ ապրանք է «կախված»: Եվ ուրեմն, ի՞նչն էր շուկայից «կերակրվողների» բախման պատճառը...

Չնայած հանցավոր աշխարհում Յապոնչիկի դեմ կատարված մահափորձի կասկածներն ընկան առավելապես Զանգվելաձեի վրա՝ Թարիել Օնիանիի կլանից, իրավապահ մարմինների տվյալներով՝ այն ամենը, որ կատարվեց Յապոնչիկի հետ, պետք է դիտարկել Չերքիզովյան շուկայի փակման եւ Թելման Իսմայիլովի՝ Թուրքիա մեկնելու շղթայում: Ըստ այդ վարկածի՝ Յապոնչիկն իրավապահներին տեղեկություններ էր տրամադրել մի շարք հեղինակավոր բիզնեսմենների կողմից խոշոր փողեր «լվանալու» եւ դրանք արտասահման փոխադրելու վերաբերյալ: Այդպիսի տեղեկություններ նա տրամադրել էր նաեւ Իսմայիլովի մասին, ինչը ԱԴԾ-ի աշխատակիցներին օգնել էր կիսաքրեական Չերքիզովյան շուկան փակելու գործում: Այսպիսով, Յապոնչիկի թշնամիները շատ էին, իսկ նրանց հակադարձումը՝ մահացու...

Տարօրինակ անվանափոխություն

Հանրահայտ դառնալու, բոլորից տարբերվելու ձգտումը շատերին հանգիստ չի տալիս ողջ կյանքի ընթացքում, եւ նպատակին հասնելու համար ոմանք ընտրում են ամենաարտառոց միջոցները:

Ամերիկացի Պիտեր Ռոբերտ Ֆիլիպսը 15 տարի առաջ որոշեց անվանափոխվել եւ իր բոլոր փաստաթղթերում պաշտոնապես ստացավ Հիսուս Քրիստոս անվանումը:

Դժվար է ասել, թե ինչը նրան ստիպեց Աստծո որդու անունը կրել. ինքը պնդում է, որ հավատքից ելնելով, սակայն շատերի կարծիքով՝ արարքը շահադիտական նպատակ էր հետապնդում. դժվար է պատկերացնել մի ոստիկանի, որը կհամարձակվեր փուգանել Հիսուս անունը կրողին:

Ինչեւէ, նա անցած 15 տարիների ընթացքում որեւէ խնդիր չունեցավ իր անվան հետ կապված, սակայն վերջերս Վիրջինիայի նահանգի ոստիկանությունը հրաժարվեց նրան այդ տվյալներով վարորդական իրավունքի նոր վկայական տրամադրել: Իրավապահներն իրենց մերժումը բացատրում են նրանով, որ 50-ամյա գործարարի ծննդյան վկայականում նշված է Պիտեր անվանումը, եւ իրենց համար հիմք են սկզբնական տվյալները:

Փրկչի անունը կրող ամերիկացին հուսահատ դիմել է դատարան՝ իր «իրական» անվամբ վարորդական իրավունքի վկայական ստանալու համար, սակայն այս նուրբ հարցի քննարկումը, կարծում ենք, դեռ երկար կձգվի. դատավորները չեն շտապի բավարարել հայցը, որը հավատացյալների շրջանում հաստատ դժգոհություն կառաջացնի:

Լռությունը խախտելը

Վարչական իրավախախտումների վերաբերյալ հոդվածը, ինչպես պարզվում է, ոչ բոլորին է հայտնի: Շատերս ենք ցնցվել գիշերային հրավառություններից, ռեստորանային աղաղակից, երաժշտությունից, զայրացել մեքենաների անդադար ազդանշաններից:

Խնջույքի առիթներ ունենում են բոլորը՝ ուրախ երգեր, պարեր, նաեւ՝ հրավառություն: Բայց ձեր զվարճանքի տարածքում հաստատ ապրում են տարեց ու հիվանդ մարդիկ, երեխաներ: Պատկերացնո՞ւմ եք նրանց վիճակն ու արձագանքը ձեր հախուռն խրախճանքին: Աղմուկը՝ լինի հրավառություն թե երաժշտություն, վտանգավոր է հասարակության համար:

Աղմուկը մարդու վրա կարող է ազդել երկու ճանապարհով: Այն թողնում է տեղային ազդեցություն ուղղակիորեն լսողական ապարատի վրա՝ առաջացնելով թմբկաթաղանթի եւ լսողական ապարատի խնդիրներ, ինչպես եւ աղմուկի ազդեցությունը կարող է հանգեցնել կենտրոնական նյարդային համակարգի հետ կապված խանգարումների:

Կան ձայնի բարձրության հաստատված նորմեր, որոնք խախտելը նույնպես վարչական իրավախախտում է համարվում: Նման բողոքներ հիմնականում լինում են այն բնակիչներից, որոնց շենքերի առաջին հարկերում գործում են ռեստորաններ կամ զվարճանքի այլ կենտրոններ: Ըստ մասնագետների՝ ժամը 6.00-ից 22.00-ը ձայնի առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 40 դեցիբելը եւ առավելագույն մակարդակը՝ 50 դեցիբելը, իսկ ժամը 22.00-ից մինչեւ 6.00-ն ընկած ժամանակահատվածում համարժեք մակարդակը չպետք է գերազանցի 30 դեցիբելը եւ առավելագույն մակարդակը՝ 45 դեցիբելը:

Մեկ այլ խնդիր է մեքենաների անհարկի ձայնային ազդանշանը: Կան վարորդներ, որոնք ամեն քայլափոխի տալիս են ձայնային ազդանշան, ավելին՝ տեղադրում են նաեւ գերհզոր ձայնային ազդանշաններ, կամ, որ ամենաանհասկանալին եւ անհեթեթն է, ծակում են մեքենայի խլացուցիչները՝ առավելագույն ձայնի համար: Եթե ձեր մեքենայի բարձր ձայնը ձեզ դուր է գալիս, միայնակ լսեք. դժվար թե այն դուր գա քնած երեխային կամ աշխատանքից հոգնած տուն դարձած մարդուն:

Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումները սահմանված են կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի որոշմամբ հաստատված՝ ճանապարհային երթեւեկության կանոններով: Սահմանվում են նաեւ ձայնային ազդանշանի կիրառման հետեւյալ երկու դեպքերը: Առաջինը բնակավայրից դուրս վազանց կատարելու մտադրության մասին երթեւեկության մյուս մասնակիցներին նախազգուշացնելն է: Երկրորդը՝ ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելը: Այսինքն, նախատեսվում է երկու դեպք, երբ թույլատրվում է օգտագործել տրանսպորտի ձայնային ազդանշանը: Նշված կանոնները խախտելու համար վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 19-րդ մասով նախատեսվում է պատասխանատվություն՝ 5000 դրամ տուգանքի չափով:

Աղմուկից բողոքող քաղաքացիների շատ կարելի է հանդիպել, իսկ այդ խնդրով ոստիկանություն դիմողների՝ ոչ այնքան: Միայն բողոքելով չենք հասնի ցանկալի արդյունքի. պետք է դիմել ոստիկանություն, համագործակցել ոստիկանների հետ՝ խնդիրը լուծելու համար:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Հոդված 180. Լռությունը խախտելը

1. Գիշերային ժամանակ (ժամը 23.00-ից մինչեւ 7.00-ը) լռությունը խախտելը, այսինքն՝ բարձրաձայն երգելը, երաժշտական գործիքներ նվագելը, ձայնային ազդանշաններ տալը, բարձր միացրած հեռուստացույցից, ռադիոընդունիչից, մագնիտաֆոնից կամ այլ սարքերից օգտվելը բնակելի շենքերի բնակարաններում, մուտքերում, բնակելի տարածություններում, բակերում, փողոցներում, այլ հասարակական վայրերում կամ դրանցից դուրս աղմուկով ուղեկցվող աշխատանքներ կատարելը, որոնք կապված չեն անհետաձգելի անհրաժեշտության հետ, ինչպես եւ այլ գործողությունները, որոնք խախտում են գիշերային անդորրը՝առաջացնում են նախազգուշացում:

2. Գիշերային ժամանակ հրագործական արտադրատեսակներ օգտագործելը (բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի)՝առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով:

4. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք

Ավազակային հարձակումներ

Սկիզբը՝ էջ 1

Ավազակություն կատարողին թվում էր, թե տեսախցիկից թաքնվելով՝ կխուսափի քրեական պատասխանատվությունից: Նրան ոստիկանները օրեր անց հայտնաբերեցին ու բերման ենթարկեցին:

Գրեթե բոլոր դեղատներում կան տեսախցիկներ: Սա, իհարկե, որոշ չափով օգնում է իրավապահներին՝ բացահայտելու հանցագործությունը, եթե անգամ չի երեւում հանցագործությունը կատարողի դեմքը:

Բացի այդ, ոստիկանությունն իրականացնում է շուրջօրյա ծառայություն: Մեկ անգամ չէ, որ գիշերային շրջայցի ելած պարեկայինները ավազակություն կատարողին բռնել են հանցագործության վայրը լքելիս:

Օբյեկտների պահպանություն է իրականացնում նաեւ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը: Ցանկացած ոտնձգության դեպքում ստորաբաժանման արագ արձագանքման խմբերը հաշված րոպեների ընթացքում լինում են տեղում:

Բացահայտումներ լինում են նաեւ միայն քրեական հետախույզներին հայտնի միջոցների կիրառմամբ, ինչի մասին, բնականաբար, կլռենք:

Երկար կարելի է թվել ոստիկանության գործողությունները այս հանցատեսակի բացահայտման ուղղությամբ: Ընդհանրապես, բոլոր հանցատեսակների պարագայում էլ ոստիկանության գերխնդիրը դրանց կանխումն է, ինչին հասնելու ուղիղ ճանապարհը քարոզչությունն է:

Իսկ բոլոր նրանց, ովքեր ընտրել են անօրինական ճանապարհներ, հիշեցնենք, որ չկան չբացահայտվող հանցագործություններ, եւ բոլոր հանցագործները վաղ թե ուշ հայտնաբերվում են:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Թմրամոլություն

1986 թ. խորհրդային մամուլն առաջին անգամ բարձրաձայնեց թմրամոլության մասին: Թերթերը լի էին նման բովանդակությամբ հոդվածներով: Թմրամոլների շարքերին «միանում են» տոքսիկոմանները, որոնց հայտնվելն արդյունք էր հարբեցողության դեմ պայքարի, երբ սահմանափակվել էին ոգելից խմիչքների արտադրությունը եւ վաճառքը: Այս կատեգորիաների քաղաքացիների թիվը կտրուկ աճեց. 1987 թ. հունվարի դրությամբ՝ նրանց թիվը հասնում էր 48 հազարի:

ԽՍՀՄ-ում թմրամոլությունը նորություն չէր, սակայն 80-ական, հատկապես՝ 90-ական թթ. թմրամոլների թիվը կտրուկ աճեց, եւ աճը շարունակվում էր: Քրեական աշխարհը չէր կարող անմասն մնալ դրանից, քանի որ բիզնեսի այդ ճեւը ահռելի եկամուտներ էր բերում: Դեռեւս 1960-ական թթ. Մոնղոլի (Գենադի Կորկով) ավազակախումբն առաջինն էր, որ թմրավաճառներին ստիպեց որոշակի հարկ վճարել:

Թմրամոլներ հայտնվեցին նաեւ խորհրդային բանակում: 1986 թ. սեպտեմբերի 20-ին Ուֆա քաղաքի զորամասերից մեկի երկու զինծառայողներ սպանելով միլիցիայի երկու աշխատակցի՝ գրավեցին «Տու-134» մարդատար ինքնաթիռը՝ ուղեւորների հետ: Ինչպես պարզվեց հետագայում՝ երկուսն էլ թմրամոլ էին:

Հետաքննության ընթացքում պարզվում է, որ զորամասի շրջակայքում աճում էր մեծ քանակությամբ կանեփ: Զինվորները ժամանակ առ ժամանակ հավաքում էին կանեփը եւ թմրամիջոց պատրաստում: Այս «գործի» պարագլուխը կրտսեր սերժանտ Նիկոլայ Մանցեւն էր: Նա կարողանում է իր շուրջը համախմբել մի քանի հոգու: Թմրամիջոցներ օգտագործելիս նրանք զրուցում էին արտասահմանի մասին, գտնում, որ կյանքն այնտեղ ավելի հետաքրքիր է, քան ԽՍՀՄ-ում, չնայած այն հանգամանքին, որ վերակառուցման քաղաքականության հետեւանքով բավական դյուրին էր դարձել արտասահման մեկնելը: Նրանք երազում էին ապրել Հարավաֆրիկյան Հանրապետությունում, որտեղ, իբր, օրենքները թույլ են տալիս քիչ ծախսելով՝ լավ ապրել: Ահա այս բովանդակությամբ զրույցներ էր վարում Մանցեւը ծառայակիցների հետ: Արտասահման հասնելու միակ միջոցը ինքնաթիռի առեւանգումն էր:

1986 թ. սեպտեմբերի 20-ին գտնվելով վերակարգում՝ երեք դավադիրները զինասենյակից հափշտակում են գնդացիր, ինքնաձիգ, դիպուկահար հրացան, փամփուշտներ եւ աննկատ հեռանում զորամասից:

Հանցագործները կանգնեցնում են տաքսի եւ պահանջում իրենց տանել զորամասի հարեւանությամբ գտնվող պահակակետը, որտեղ նրանց հանցակից Ֆեդորկինն էր, սակայն ճանապահին անսպասելի հանդիպում են միլիցիայի պարեկային մեքենայի: Կարծելով, թե սկսվել է իրենց հետապնդումը, դիմահար կրակոցներով սպանում են երկու միլիցիոներներին: Հրաձգության ժամանակ հանցագործներից մեկը փախչում է, մյուս երկուսը՝ Մանցեւը եւ Յագմուրժինը, որոշում են իրականացնել իրենց մտադրությունը: Նրանք ստիպում են տաքսու վարորդին իրենց տանել օդանավակայան, որտեղ գրավում են «Տու-134» մարդատար ինքնաթիռը՝ 74 ուղեւորներով: Ուղեւորներից մեկը փորձում է կանգնեցնել առեւանգիչներին, սակայն զոհվում է ինքնաձիգի կրակահերթից: Նման պայմաններում օդանավի հրամանատարը որոշում է կատարել առեւանգիչների պահանջը, բայց պարզվում է, որ կրակահերթի հետեւանքով խախտվել է ինքնաթիռի հերմետիկությունը, ուստի հնարավոր չէր օդանավը օդ բարձրացնել: Սկսվում են բանակցություններ ավազակների հետ: Այդ ժամանակ օդանավակայանը շրջապատում են միլիցիան եւ զորքերը:

Բանակցությունների շնորհիվ առեւանգիչները ազատ են արձակում կանանց ու երեխաներին: Ինքնաթիռում մնում են քսան ուղեւոր, որոնց ազատման դիմաց հանցագործները պահանջում են թմրամիջոցներ:

Ընդունելով թմրամիջոց՝ Յագմուրժին քնում է: Այդ ժամանակ ուղեկցորդուհի Ելենա Ժուկովսկայան փորձում է քնած Մանցեւի ձեռքից վերցնել ավտոմատը, սակայն նա արթնանում է եւ քնաթաթախ հարցնում է՝ ի՞նչ է պատահել: Աղջիկն իրեն չի կորցնում եւ առաջարկում լրացուցիչ թմրամիջոց: Ուղեկցորդուհի Ժուկովսկայան կարողանում է նրան համոզել, որ ազատ արձակի մնացած ուղեւորներին, ինչը հաջողվում է: Գործն ավարտում է գրոհային խումբը՝ ոչնչացնելով առեւանգիչներին:

Գողացող մեքենան

Հոկտեմբերի 24-ին ոստիկանության Թալինի բաժնում հաղորդում ստացվեց, որ Արտենի գյուղի մի տնից գողացել են 21-ամյա բնակչուհու բջջային հեռախոսը:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ քրեական հետախույզները պարզեցին հանցագործությունը կատարած անձի ինքնությունը:

Ձեռք բերված տեղեկությունների համաձայն՝ գողությունը կատարել էր տուժողի ծանոթը՝ Արմավիրի մարզի Մայիսյան գյուղի 71-ամյա մի բնակչուհի, որն առավոտյան եղել էր նրանց տանը:

Կասկածվողը Արմավիրի մարզի Զարթոնք գյուղում հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Թալինի բաժին:

Անձնական խուզարկությամբ գողոնը հայտնաբերվեց:

Նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

«Երիտասարդ վտանգներ»

Վիճակագրության համաձայն՝ երիտասարդ վարորդները առավել հաճախ են ճանապարհատրանսպորտային պատահարների մասնակից դառնում: Ընդ որում, պատահարների գերակշռող դեպքերը ծանր հետեւանքներով են:

Երիտասարդների մասնակցությամբ պատահարների պատճառները տարբեր են, եւ դրանց հիմքում միայն փորձառության պակասը չէ: Երիտասարդ վարորդները զուրկ են կամային որոշ առանձնահատկություններից, որոնք էլ երթեւեկությունը դարձնում են վտանգավոր:

Երիտասարդ վարորդներին առավել բնորոշ են հետեւյալ սխալները, որոնք կարող են պատահարի հանգեցնել:

Զգոնության պակասը կամ անուշադրությունը

Երիտասարդները նախընտրում են մեքենա վարելը «համալրել» այլ զբաղմունքներով. օրինակ՝ երաժշտություն լսել, իսկ մեղեդու փնտրտուքը շեղում է նրանց ուշադրությունը, ինչն, անկասկած, խիստ վտանգավոր է: Բացի այդ, տարիքային այս խմբի վարորդներն առավել հաճախ են օգտվում բջջային հեռախոսներից. շատերը նույնիսկ հանդգնում են վարելիս բջջային նամակագրությամբ զբաղվել:

Համարձակ եւ ինքնավստահ պահվածքը

Այս հատկանիշները եւս «երիտասարդական» են, եւ եթե առօրյա կյանքում դրանք կարող են դրական դիտվել, ապա երթեւեկության մեջ չափից ավելի ինքնավստահությունը եւ համարձակությունը ընդամենը մեծացնում են ռիսկայնությունը:

Այս խմբի վարորդներն առավել հաճախ են անտեսում ճանապարհային նշանները, լուսացույցի հրահանգները եւ առհասարակ՝ երթեւեկության կանոնները խախտելը երիտասարդներից շատերի համար պարզապես արկածախնդրություն եւ յուրօրինակ մարզաձեւ է: Երիտասարդներին ադրենալինի ավելցուկը նույնիսկ հաճելի է, եւ գլուխ բարձրացրած արկածախնդրությունը հիմնականում դրսեւորվում է արագությունը գերազանցելով, իրար հետ մրցելով, իսկ վերլուծություններն ու վիճակագրությունը փաստում են, որ բարձր արագության եւ վտանգավոր մանեւրներ կատարելու հետեւանքով տեղի ունեցած պատահարները հիմնականում ծանր վախճան են ունենում:

Խմբակային վտանգ

Երիտասարդների մասնակցությամբ պատահարների համար երբեմն պատճառ են դառնում հասակակից ուղեւորները: Առհասարակ երիտասարդները սիրում են խմբակային երթեւեկությունը, իսկ սրահի «գերհագեցածությունը» նման իրավիճակում որեւէ լավ բան չի խոստանում. անկանխատեսելի կատակներ, աղմուկ եւ այլն, որոնք շեղում են վարորդի ուշադրությունը:

Հարկ է նշել, որ ալկոհոլն այս տարիքի վարորդների համար առավել վտանգավոր է: Նույնիսկ քիչ քանակության թույլ ոգելիցն առավել խորացնում է երիտասարդների արկածախնդրությունը:

Կանոնների անտեսումը

Մշտապես ինչ-որ տեղ շտապող երիտասարդները ոչ միշտ են պահպանում տրանսպորտային միջոցների միջեւ նախատեսված անվտանգ միջտարածությունը, եւ այս պարագայում բախումից խուսափելը գրեթե անհնար է. 90 կմ/ժամ արագությամբ ընթացող ավտոմեքենայի արգելակման ուղին մոտ 33 մետր է, իսկ ամենագնացների դեպքում՝ 1,5-3 մետր ավելի:

Ամրագոտիներից խուսափելու «ավանդույթը» նույնպես տարիքային այս խմբի «մենաշնորհներից» է: Իսկ անվտանգության այս համակարգի անտեսումը ավելացնում է ծանր հետեւանքներով պատահարների քանակը:

Երիտասարդ վարորդները հաճախ անկարող են լինում խուսափել այնպիսի վթարային իրավիճակներից, որոնք ավելի փորձառու վարորդները կարող են առանց ավելորդ ջանքի շրջանցել:

Պատճառն այս դեպքում, թերեւս, փորձի պակասն է, որին գումարվում են անուշադրությունը, արագության գերազանցումն ու անհիմն ռիսկը:

Ձմռան ընդառաջ

Ցանկացած վարորդ, նույնիսկ նորելուկները, կհամաձայնեն, որ ձմեռային երթեւեկությունն ունի իր առանձնահատկությունները, ուստի անհրաժեշտ է տարվա այդ եղանակին նախօրոք պատրաստվել: Խոսքը միայն ձմեռային անվադողերի մասին չէ: Ցրտին դիմակայելու համար մեքենան պետք է նախապատրաստական ծավալուն փուլ անցնի, հակառակ դեպքում՝ վարորդներին սպասում են բազմաթիվ անցանկալի անակնկալներ. առավոտյան շարժիչը գործի չի դրվի, փականները կսառչեն եւ այլն:

Մասնագետները խորհուրդ են տալիս ուշադրություն դարձնել հատկապես չորս առաջնային խնդրի վրա.

ստուգել մարտկոցի վիճակը. թեկուզ աննշան կասկածի դեպքում ցանկալի է փոխել,

ստուգել մեքենայում օգտագործվող բոլոր հեղուկների վիճակը՝ շարժիչի յուղը, հովացման եւ արգելակման համակարգի հեղուկները,

անվադողերը ցանկալի է փոխարինել տարվա այդ եղանակի համար նախատեսված տեսականիով,

ստուգել կախոցի վիճակը, ինչպես եւ անվադողերի անկյունների աստիճանը:

Նշված աշխատանքները թեեւ ծախսատար եւ ժամանակատար չեն, սակայն ոչ բոլոր վարորդներն են ցրտերից առաջ այցելում տեխսպասարկման կետեր:

Թեկուզ մեկ ձմեռ անցկացրած վարորդները քաջ գիտակցում են մարտկոցի կարեւորությունը: Մարտկոցի տեխնիկական վիճակի կանխորոշումը մասնագիտական մոտեցում է պահանջում, եւ հնարավոր չէ տնային պայմաններում լիարժեք կանխորոշում անցկացնել: Եթե կանխորոշմամբ պարզվի, որ մարտկոցն «աշխատունակ է», ապա անհրաժեշտ է ստուգել նաեւ գեներատորի եւ լիցքավորումն ապահովող կարգավորիչի աշխատանքը: Որպես կանոն, տնայնագործական պայմաններում մեքենայում տեղադրված էլեկտրական սարքերը մեծացնում են էներգիայի սպառումը, ինչն ավելորդ լարվածություն է մարտկոցի համար, եւ անպայման ցուրտ եղանակին իրեն զգալ կտա:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաեւ շարժիչի սնուցման համակարգին, հատկապես՝ էլեկտրամոմերի աշխատանքին: Նույնիսկ նոր մոմերը կարող են թերություններ ունենալ, ինչի հետեւանքով ցրտերին դժվար կլինի շարժիչը գործի դնել: Էլեկտրամոմերը կարող են լիարժեք չգործել, եթե վառելիքի մատակարարումը սխալ լինի. հարուստ խառնուրդի դեպքում էլեկտրամոմերի վրա մրուր է նստում: Էլեկտրամոմերի աշխատանքի վրա վնասակար ազդեցություն կարող է ունենալ նաեւ թերմոստատի խափանումը. երբ շարժիչը համապատասխան ջերմաստիճանի չի հասնում, այրումը նորմալ չի կատարվում:

Ինչ վերաբերում է հովացման համակարգի չսառչող հեղուկին, ապա կասկածի դեպքում ցանկալի է այն ամբողջությամբ փոխել:

Ապակիների, հայելիների եւ սրահի տաքացուցիչների անխափան աշխատանքը նույնպես կարեւոր է. անհրաժեշտ է այս համակարգերը նախապես ստուգել եւ առկա թերություններն անմիջապես վերացնել:

Արգելակման համակարգը ձմռանն առավել խոցելի է դառնում. աննշան ճաքերը կարող են ցրտից մեծանալ, եւ հեղուկի արտահոսքն այս դեպքում անխուսափելի է: Առաջին հերթին պետք է ուսումնասիրել համակարգի հանգույցները: Արգելակների հանգույցների անհամաչափ մաշվածության դեպքում արգելակման ուղին նույնպես համաչափ չի լինի, ինչի հետեւանքով սայթաքուն ճանապարհին արգելակելիս մեքենան կդառնա անկառավարելի:

Ուժային ագրեգատի յուղը նույնպես անհրաժեշտ է փոխարինել տարվա այս եղանակի համար նախատեսված տեսականիով. բացառություն կարող է լինել միայն սինթետիկ յուղեր օգտագործողների համար. այդ յուղերն իրենց բոլոր հատկանիշներով համասեզոնային են:

Մեծ քաղաքների բնակիչները պետք է հաշվի առնեն այն հանգամանքը, որ խցանումների ժամանակ, երբ մեքենայի շարժիչը ստիպված է երկար ժամանակ ցածր պտույտներով աշխատել, էլեկտրամոմերի վրա մրուր է նստում. կայանելուց առաջ ցանկալի է շարժիչը մեկ րոպե աշխատեցնել բարձր պտույտներով (2-3 հազար պտույտ):

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Ոստիկանության ծառայողների օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 15-ին Իսակովի պողոտայից բերման է ենթարկվել 33-ամյա տղամարդ, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի (Խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները նոյեմբերի 15-ին Խանջյան փողոցից բերման են ենթարկել 48-ամյա մի տղամարդու, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (Գողությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Արարատի բաժնի ծառայողները նոյեմբերի 15-ին Արարատ քաղաքի Խանջյան փողոցում հայտնաբերել եւ բերման են ենթարկել 20-ամյա մի երիտասարդի, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի (Պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը) մեղադրանքով:

◆

Նոյեմբերի 16-ին ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Երեւանի Աբովյան փողոցի եւ Սայաթ-Նովայի պողոտայի խաչմերուկից բերման է ենթարկվել 19-ամյա Ազատ Հ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի (Գողությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի ծառայողները նոյեմբերի 16-ին Երեւանի Մալաթիայի եւ Վանքայի փողոցների խաչմերուկից բերման են ենթարկել 36-ամյա Աղասի Ս.-ին, որը Արցախի Հանրապետության ոստիկանության Մարտունու բաժնի կողմից հետախուզվում էր ԱՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի մեղադրանքով՝ խուսափում ազատազրկումից:

◆

Նոյեմբերի 16-ին Բագրատաշենի սահմանապահ անցակետից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել 33-ամյա Վահան Ա.-ն, որը ոստիկանության Մաշտոցի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 144-րդ (Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը) եւ 254-րդ (Համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը) հոդվածների մեղադրանքով:

◆

Ոստիկանության Տավուշի բաժնի ծառայողները նոյեմբերի 17-ին Բագրատաշենի սահմանային անցակետից բերման են ենթարկել 43-ամյա Մուշեղ Մ.-ին, որը հետախուզվում էր ոստիկանության Կենտրոնական բաժնի կողմից՝ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի (Խուլիգանությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողների ձեռնարկած բացատրական աշխատանքների շնորհիվ բաժին է ներկայացել Ներքին Շենգավիթի բնակիչ, 26-ամյա մի տղամարդ, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի (Գողությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ նոյեմբերի 15-ին Կիեւ-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո ոստիկանություն է ներկայացել 29-ամյա մի քաղաքացի, որը 2018 թ. օգոստոսից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի (Դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հակոբ ... | Պարսիկ բանաստեղծ | Բարձրյալը | Կղզի Եգեյան ծովում | Տիտիկակա / Սլավոն | Զգտում, միտում | Ռազմ. հրաման | Իսրայելի դրամ | ... Դանիելյան (շախմ.)

Հոսում է այգում, դաշտում | Քաղաք, Հունաստան

Պտղատու ծառ / Կրոն. գիրք | Բախտ

«Վիճակը նետված է. անցնել ...ը» | «... ի հրավեր»

«Սիդա, գործ. անձ / «... 420» | ԽՍՀՄ քառակի հերոս / Իտալ. կինոռեժիսոր | Բարիտոն / Մառախուղ | Մոնիկա ...

Գիշատիչ կաթնասուն | Ժողովուրդ, Ռուսաստ. / Հավկիթ / ... Լոպես

... Լոնդոն

Ինքնահոս | Մարքսի ծննդավայրը | «Ռոբինզոն Կրուզո»

Վտարանդի | Կերպարվեստի ուղղություն | Ամենամեծ թերակղզին | ...-Քաթիպա

Հնագույն նվագարան

Կոնֆետի տեսակ | Զոհրապ, նովել | Մեռյալների աշխարհի «տնօրենը» (հուն. դից.) | Տարոն գավառի գյուղ (Մաշտոց)

Հունգար ֆիզիկոս / Թվական, շաղկապ | Վարչ. կենտրոն, Ֆրանսիա | Հույն առակագիր / Ի ...

Երեւանյան գետ | Փողոց. մարտի արգելք / Գրելանյութ | Շախմատի խաղաքար / Արքայի բազկաթոռ | Վիետնամի մանրադրամ

Մարզական ընկերություն | Լեռնաշղթա, ՀՀ | Առաքյալ

Միքի Մաուս / Գազան | «... Բովարի» | Արեւադարձ. քամի / Հայկ. պանիր | Նինջ / Երկրութ. միավոր

Գաճաճ ձի | Ռոբին ... | Գետ, Մարոկկո / Նելսոն Ստեփանյան | ... Ռոբսոն | Դանուբի ամենաերկար վտակը

Թունավոր օձ | Մարտարվեստ | Խորհրդ. բեւեռախույզ / Վիպասան | Իտալ. օպեր. երգչուհի / Գ

Սիրիուսից հետո 2-րդ պայծառ աստղը | Ռենատո ... / Հանքանյութ

Ջայլամ / Տրոյան պեղողը | Ժամերգություն / Վառելափայտ | ...յան գարշապար | Մաշկի բնածին արատ

Բաշկիրիա | Գավազան / ... Խրենիկով | Պնակաձեւ աման | Կալսող գործիք / Չոբան ... (Թում.) | Ընտանի թռչուն

Էգ ոչխար | Լուսամուտ / Գնդասեղ

Ճնշման միավոր / Հնոց | Մուրաբայի պտուղ / Ծիսական մոմ

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Չեխ ազգային հերոս | Չիպոլինո

Վիետնամի մանրադրամ | Սեղմ, ստվար | Կոկո ...

Դանուբի ամենաերկար վտակը | Իտալ. օպեր. երգչուհի / Գ

Ընտանի թռչուն

Սպասագուշակ

22.11 - 28.11

Խոյ - Խորհուրդ է տրվում պատրաստ լինելու թյուրիմացություններին եւ դիմակայելու խոչընդոտներին:

Ցուլ - Իրադարձությունները կարող են լարվածություն առաջացնել: Լավագույն պահը չէ համառություն դրսեւորելու:

Երկվորյակ - Կբախվեք նախաձեռնությունների բացասական կամ կասկածելի կողմի հետ:

Խեցգետին - Օգնության կհասնի շրջահայացությունը, ինքնապահպանման բնազդը:

Առյուծ - Ժամանակին կանգ առեք, եթե ինչոր բան այնպես չի ընթանում: Առավել արդյունավետ է շաբաթա առաջին կեսը:

Կույս - Չարժե ներքաշվել ձեր արժանիքները նսեմացնող եւ թերությունները ընդգծող սցենարների մեջ:

Կշեռք - Դրսեւորեք զգուշավորություն: Չարժե հրաժարվել ձեր օրինական իրավունքներից եւ լիազորություններից:

Կարիճ - Ձեզ պետք կգա ինքնատիրապետումը, խելամտությունը, ուշադրությունը: Հիշեք, որ կանոնների վատ իմացությունը չի ազատում պատասխանատվությունից:

Աղեղնավոր - Հավասարակշռություն պահպանեք ցանկացած փոխգործակցության մեջ: Եթե անհրաժեշտ ամեն ինչ արել եք, ցանկալի է կանգ առնել:

Այծեղջյուր - Ձերծ մնացեք ավելորդ ջանադրությունից, համառությունից: Բացառեք ցանկացած նախաձեռնություն:

Ջրհոս - Ջրհոսներին չի խանգարի կազմակերպվածությունը, կարգապահությունը: Պարտադիր չէ ենթարկվել ստանդարտ կանոններին: Ցանկալի է ժամանակին հեռանալ միջոցառումներից:

Ձուկ - Հրաժարվեք կասկածելի կամ աշխատատար միջոցառումներից: Չարժե փորձել ճակատագիրը՝ ջանալով հաղթահարել լուրջ արգելքը:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.f6-g7 d8:f6 2.g7:a5x

Խնդիր N2 1.b2-c3 a1:d4 2.g3-f4 e5:g3 3.h4:a7x

Պատրաստեց **Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ**
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 21.11.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: